

## ԿԱՐԾԻՔ

### *Անահիտ Հրանտի Խյուպուզյանի «Ճախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը հանրակրթական դպրոցում» վերնագրով ատենախոսության վերաբերյալ*

Թվայնացման դարաշրջանում, երբ արհեստական բանականությունը ձևավորել է նոր հաղորդակցման մոդել՝ մարդ-ԱԲ, ցանկացած միջգիտական աղերսներ ենթադրող հիմնախնդրի ուսումնասիրություն ինքնատիպ, բազմաշերտ, գիտական, համակարգային է: Այն հետազոտողից պահանջում է համարձակություն, խորքային գիտելիքների տիրապետում տարբեր գիտական ոլորտներից, հետազոտական կարողություններ, վերլուծելահամադրելու բարձր կոմպետենցիաներ:

Մանկավարժ-կենսաբանին դա լիարժեք հաջողվել է: Ավելին՝ բազային կրթությունը Ա.Խյուպուզյանին հնարավորություն է տվել խորքային գենետիկական, նյարդակենսաբանական, էվոլյուցիոն, ֆիզիոլոգիական, ուղեղի կիսագնդերի ֆունկցիոնալ ասիմետրիայից առաջացող առանձնահատկությունների վերլուծություն իրականացել: Ներթափառողական ուսումնասիրությունների ներկա փուլում, երբ ապացուցված է, որ ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը կարող է էապես բարելավել երեխաների կյանքի, ուսումնառության որակը տարբեր սոցիալական ինստիտուտներում՝ արդիական է, թեմայի ընտրությունը հիմնավորված: Ատենախոսի կողմից առաջադրված հիմնախնդիրը մարտահրավեր է մանկավարժության գիտության այնպիսի գիտաճյուղերի, ինչպիսիք են՝ հոգեդիդակտիկան, մանկավարժական մարդաբանությունը, կենսագենետիկան, մանկավարժական վալեոլոգիան, սոցիալական մավարժությունը: Այս համատեքստում հատկապես հաջողված է թեմայի ընտրությունը, երբ ատենախոսը առողջ, կառուցողական քննադատությամբ ներկայացնում է ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում՝ բացահայտելով հարմարման գործընթացի վրա ազդող գործոններն ու պայմանները: Թեման արդիական է: Աշխատանքի կուռ կառուցվածքը տրամաբանորեն արտացոլում է բովանդակությունը:

Ատենախոսության ներածությունում հիմնավորելով թեմայի արդիականությունը՝ ատենախոսը հստակ ձևակերպել է հետազոտության նպատակը, նպատակից բխող համակարգված 7 խումբ առաջադիր խնդիրները, երեք կետից բաղկացած գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող 6 հիմնական դրույթները, հետազոտության տեսագործնական նշանակությունը:

Աշխատանքն ունի կոտ բովանդակություն. պահպանված է ատենախոսության բովանդակային և տրամաբանական շղթան՝ նպատակ-խնդիրներից մինչև 7 կետերից բաղկացած եզրակացություններ: Առաջադրված խնդիրները ամբողջովին լուծված են ատենախոսության տարբեր գլուխներում:

Հետազոտության նորույթը բացահայտում է ոչ միայն լայնածավալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը, այլև ձախլիկ երեխաների հարմարման դժվարությունները հանրակրթական դպրոցում բացահայտելով հարմարման գործընթացի վրա ազդող գործոններն ու պայմանները: Ատենախոսը, սահմանելով ձախլիկության դրսևորման առանձնահատկությունները, այն դիտարկել է որպես սոցիալ-մանկավարժական հարմարման խնդրի բաղադրիչ: Մա կարևոր մեթոդաբանական քայլ է, որը ցույց է տալիս հետազոտության գաղափարական խորքայնությունը:

Հետազոտությունն ունի տեսագործնական նշանակություն: Պաշտպանության են ներկայացված վեց դրույթներ, որոնք բոլորն էլ բխում են գիտատեսական վերոթվարկյալ հիմնավորումներից: Աշխատանքում ներառված աղյուսակներն ու տրամագրերը հավաստի են դարձնում աշխատանքի արդյունքները:

Առանձնահատուկ արժեքավոր է գործնական նշանակությունը շեշտադրող հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը:

Լիարժեք հիմնավորված և տրամաբանական է, որ աշխատանքի «Ձախլիկությունը որպես կենսագենետիկական և սոցիալական երևույթ» 6 ենթագլխից բաղկացած առաջին գլխում, ատենախոսը նախ ներկայացրել է տեսական մոտեցումները ձախլիկության և դրա առաջացման պատճառների վերաբերյալ, ապա քննարկածը փաստարկել դրսևորման կենսագենետիկական հիմքերի վերլուծությամբ, դիտարկել, թե ինչպես միջավայրն ու դաստիարակությունը կարող են ազդել ձախլիկություն երևույթի ընկալման, դրսևորման վրա: Համակարծիք ենք ատենախոսի այն պնդմանը, թե սոցիալ-մանկավարժական հարմարման հիմքում ընկած է ձախլիկ երեխաների կենսաբանական, հոգեբանական, անհատական, տարիքային, սեռային և անշուշտ ձախլիկության դրսևորման սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները:

Հատկանշական է, որ ատենախոսը բարձր պատասխանատվությամբ, մանրակրկտությամբ է քննարկել ձախլիկության հիմնախնդիրը բացահայտող տարբեր երկրներում շրջանառող վարկածները, սակայն միաժամանակ ընդգծելով, որ. «<վարկածների կառուցման հեշտությունն ինքնին չի նշանակում դրանց գիտական հավաստիությունը՝ կա անհրաժեշտություն վերլուծել և քննադատորեն վերաիմաստավորել առկա փաստերն ու տեսությունները>>: Նրբանկատորեն, սակայն առողջ քննադատությամբ է վերլուծված աջ ձեռքի գերակայությունը խրախուսող սոցիալ-մշակութային ճնշումը, խորհրդային վերադաստիարակության, երբեմն դաժանության հասնող շտկման փորձերը, վնասվածքների արդյունքում առաջացող ձեռքերովի ձախլիկության դրսևորումը: Արժեքավոր է, երբ հիմնախնդրի զարգացումը

քննարկվում է ժամանակագրական ընթացքով: Ատենախոսը վերլուծել և համեմատական ընթացքով է ներկայացրել ձախլիկության դրսևորման հին և ժամանակակից բացատրությունները կենսաբանական, նեյրոֆիզիոլոգիական, հոգեբանական, սոցիալական, անգամ՝ փիլիսոփայական մակարդակներում: Ավելին, հետազոտողը իր քննարկումներում առաջ է անցել և դիտարկել ապացուցողական հիմնարար բազա. ձախլիկության դրսևորումը որդեգրման ընթացքում, երկվորյակների ուսումնասիրման գենետիկական մեթոդի, ձեռքի օգտագործման գենետիկական մոդելների, պոպուլյացիոն, տոհմագրական մեթոդների կիրառմամբ: Ինքնատիպ է նաև, որ ատենախոսը բազմաշեռ, միջդիսցիպլինար հիմնախնդիրը համադրել է մանկավարժության, սոցիոլոգիայի, մշակութաբանական ուսումնասիրությունների տեսադաշտից: Վերլուծությունը սկսելով բառի լեզվաբանական կառուցվածքի անգլերեն, ֆրանսերեն, լատիներեն, ռուսերեն լեզուներում բացատրությունից մինչև մի շարք գաղափարական, սիմվոլիկ կոնստրուկցիաների քննարկում՝ մշակութաբանական, կրոնական, լեզվական, ինչպես նաև ավանդույթներում, ասացվածքներում, տարբեր ժողովուրդների ծիսակարգերում ընդունված սոցիալական կարծրատիպերի, վարքագծային դրսևորումների դիտարկումը: Հիմնավորված է, որ հատկապես առավել խորքային ներկայացված է սոցիալ-մանկավարժական համակարգը հիմնախնդիրը վերլուծելիս՝ դա ուղիղ գծով բխում է նպատակի ձևակերպումից և առաջադիր խնդիրների լուծումներից:

Հատկանշական է, որ ՀՀ հանրակրթական դպրոցում ձախլիկության ֆենոմենը ներկայացնելիս քննարկված է նաև ձախլիկների սոցիալ-մանկավարժական հարմարման միջազգային փորձը: Վերլուծված են բոլոր այն սահմանափակումները, որոնց բացակայությունը հնարավորություն կտար առավել որակյալ և արդյունավետ լուծել խնդիրը: Աշխատանքում անտեսված չեն մնացել նաև հիմնախնդրի կարգավորման մեխանիզմների ընտրության ներառական ուսուցման հարցերը, որոնք նույնպես քննարկվել են ատենախոսի կողմից:

Անահիտ Խլոպուզյանը ցուցաբերել է համակարգային մոտեցում: Նա ատենախոսության ենթազուխների տրամաբանական աղերսները պահելով նախ հանգամանակից քննարկել է սոցիալ-մանկավարժական հարմարման էությունն ու դրսևորումները, ապա նաև սոցիալ-մանկավարժական հարմարումը ամբողջ կյանքի ընթացքում՝ սկսած ընտանիքից, հաջորդիվ քննարկելով խնդիրը հանրակրթական դպրոցում: Հետազոտողը խորությամբ ներկայացրել է, թե ի՞նչ հետևանքներ կարող են դրսևորվել, երբ ձախլիկ երեխաների հարմարման գործընթացները ձախողված են սոցիումում և համապատասխանաբար առաջարկում է դրանց լուծման արդյունավետ մեխանիզմներ: Այս հարցերի ներկայացմանն ու բովանդակային վերլուծությանն է նվիրված ատենախոսության երկրորդ գլուխը, որը բաղկացած է 5 ենթագլխից: Տարբեր լեզուներով ուսումնասիրելով հոգեբանական գրականություն հիմնախնդրի վերաբերյալ, ատենախոսը ներկայացրել է ձախլիկ երեխաների տարիքային, հոգեբանական, սեռային, ճանաչողական-կոգնիտիվ առանձնահատկությունները՝ հիմնավորել, թե ինչու՞ է անհրաժեշտ հարմարման ընթացքում գործընացի վրա ազդող

գործոնների և պայմանների համակարգային ապահովումը: Ատենախոսը անվերապահորեն չի ընդունում եղած կարծիքները, դրանց փոխարեն՝ հիմնավորում է հարցի շուրջ իր համակարծությունը, տարակարծությունը ընդունված տեսակետների հետ: Անդրադառնալով ձախլիկների հարմարման խնդրին, ատենախոսը վերլուծում է, թե ինչ առանձնահատկություններ կունենան ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման ընթացքում տեղեկատվության մշակման արագությունը, ուշադրությունը, հիշողությունը, կամային որակներն ընտանիքում, դպրոցում: Հսկայածավալ աշխատանք իրականացնելով՝ ատենախոսը վերլուծահամադրմամբ ախտորոշել է ձախլիկ երեխաների հարմարման դժվարություններն ու մարտահրավերները, բացահայտել հիմնական թերությունները, առաջարկել լուծման ուղիներ և բարելավման միջոցներ: Ատենախոսի կարծիքով մեծահասակների խնդրին անտեղյակությունը ստեղծում է լրացուցիչ դժվարություններ ձախլիկ երեխաների հարմարման համար՝ երբեմն ստեղծելով պաթոլոգիկ իրավիճակներ: Ատենախոսը կառուցողական քննադատությամբ վերլուծում է մեծահասակների կողմից թույլ տրված վրիպումները, ապահարմարման պատճառները՝ դրանք դասակարգելով ըստ առաջնահերթության և կարևորության՝ սկսած կազմակերպչական կառավարման հարցերից մինչև լատերալ տարբերության վերածումը խնդիր կամ <<անոմալիա>> ընկալելու մշակութային կարծրատիպերը, կրթական համակարգում անհատականացված ուսուցման պակասը, ընտանիքի և դպրոցի միջև անկանոն համագործակցությունը, մանկավարժական անձնակազմի պատրաստվածության և իրազեկվածության անբավարար մակարդակը, կրթական միջավայրի պայմանների անտեսումը:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությանը, որտեղ առավելագույնս դրսևորվում է ատենախոսի ինքնուրույնությունը, վերլուծահամադրելու, հարցերը համակարգաված քննարկելու կարողությունը: Կարծում ենք՝ ատենախոսի կատարած հաջողված աշխատանքի գրավականն են եղել հստակ սահմանված բովանդակային վավերականության մեթոդի կիրառումը, հետազոտության գլխավոր և երկրորդական նպատակների տարբերակումը, հետազոտական մեթոդների ընտրությունը, արդյունքների գնահատման ընթացքում Քրոնբախի ալֆայի սխալի հավանականության գործակցի կիրառումն ու ախտորոշումը, նմուշ խմբի ծավալի որոշման համար Մորգանի աղյուսակի կիրառումը, հացաթերթիկում հստակ հարցերի խմբավորումը՝ ըստ առաջադրված խնդիրների քննարկման: Հավաստիության քանակական գնահատման Քրոնբախի ալֆայի միջոցով արդյունքը կազմել է 0,90, որը վկայակոչում է գործիքի բարձր կիրառման արդյունավետությունը:

Հարցմանը մասնակցել են 173-ը ձախլիկներ 22 6 մազերից, այդ թվում՝ Երևան քաղաքից: Հարցումն անցկացվել է հանրակրթական դպրոցներում՝ 5-12 դասարանների աշակերտների շրջանում, ովքեր ընտրվել են պատահականության սկզբունքով: Լրացված հարցաթերթերը համարվել են հավաստի և ենթարկվել են վերջնական մշակման և վերլուծության: Սոցիոլոգիական հարցումներին մասնակցել

են 173 ձախլիկ աշակերտ, 68 ուսուցիչ, 32 ծնող: Մշակվել են երեք առաձին հարցաթերթիկներ՝ համապատասխան բովանդակային ընդգրկումով, որոնք հնարավորություն են տվել պարզելու ձախլիկների հնարավոր վարքագծային դրսևորումները հարմարման տարբեր մակարդակներում, միջավայրի պայմանները, խոչընդոտող գործոնների բազմաբնույթությունը: Տոկոսային հարաբերակցությամբ ներկայացված է ըստ աշխարհագրության, մարզերի, տարիքային խմբերի: Բարձր է հարցերի պատասխանների վերլուծության և տրամաբանական պատասխանների հիմնավորման մակարդակը: Յուրաքանչյուր հարց վերլուծված է առանձին-առանձին՝ ըստ քանակի և տոկոսային բաղադրիչի: Հատկապես ինքնատիպ է սոցիոլոգիական հարցմանը մասնակիցների պատասխանների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի, ըստ ընդգրկման աշխարհագրության և համայնքների ներգրավվածության: Կարծում ենք՝ այսպիսի մեծաքանակ տվյալների բազայի հետ աշխատանքը ատենախոսից բավականին ջանքեր է պահանջել, որն իրականացվել է որակյալ և հետազոտողին բնորոշ բարձր կոմպետենցիաներով: Ատենախոսությունն ավարտվում է երեխաների ձախլիկության հիմնախնդրի բազմակողմանի վերլուծությամբ՝ հաշվի առնելով նրանց անձնային, սոցիալական, հոգեբանական, ճանաչողական, հուզական, վարքային դրսևորման ասպեկտները: Քննարկված լուծման մեխանիզմներն ու ներկայացված առաջարկություններն իրատեսական են և համապատասխանում են հիմնախնդրի առանձնահատկություններին և կարգավորման մեխանիզմներին:

Գիտական, ինքնուրույն, քննադատական դիրքորոշմամբ, ամբողջական վերլուծության արդյունքում ատենախոսը պաշտպանության դրույթներին, ատենախոսության երեք գլուխներում լուծված առաջադիր խնդիրներին համարժեք ներկայացնում է 7 կուռ եզրակացություններ: Ատենախոսությունը ներկայացված է գիտական գրագրության չափանիշներին համահունչ:

Աշխատությունը գրված է գիտական բարձր ոճով և աչքի է ընկնում տեքստային մշակվածությամբ: Ատենախոսությունն ավարտվում է ընդգրկուն հարուստ, հիմնախնդրի քննարկումն ապահովող դիպուկ տարբեր լեզուներով օգտագործված գրականության ցանկով՝ հայերեն, ռուսերեն, անգլալեզու աղբյուրներ, որտեղ ներառված են նաև գիտական հոդվածներ, համացանցային աղբյուրներ, որոնցից աշխատանքում կան համապատասխան հղումներ:

Սեղմագիրն ամբողջովին համապատասխանում է ատենախոսությանը:

Բարձր գնահատելով կատարած գիտական, ամբողջական, ինքնուրույն աշխատանքը՝ կցանկանայինք կատարել որոշ նկատառումներ.

1. Ատենախոսության մեջ կան մտքերի որոշ կրկնություններ:


2. Ատենախոսության մեջ կան տեխնիկական վրիպակներ:

Անահիտ Հրանտի Խլոպուզյանի «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը հանրակրթական դպրոցում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած

մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.01  
«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,

Մանկավարժական գիտությունների թեկնածու՝



Ա. Ա. Տիգրանյան

Ա. Ա. Տիգրանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

<<Հայր և որդի Երեմյաններ>> ՍՊԸ-ի

մարդկային ռեսուրսների կառավարման և կորպորատիվ

մշակույթի տնօրեն՝



Տ. Ս. Այրումյան

08.01.2026թ.